30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 186(5269)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# «Գազպրոմն» ուզում է Ուկրաինային գազ վաճառել կանխավճարով

Ռուսական «Գազպրոմ» ընկերության ղեկավար Ալեքսեյ Միլլերը առաջարկել է փոփոխել Ուկրաինային գազ վաճառելու կարգը եւ այսուհետեւ վաճառքն իրականացնել կանխավճարով: Պատճառն այն է, որ ուկրաինական կողմը խախտում է վճարումների պայմանները, նշում է BBC News հեռուստաալիքը:

Հաղորդվում է, որ Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը հավանություն է տվել Միլլերի այդ առաջարկությանը:

Ավելի վաղ «Գազպրոմի» ղեկավարը հայտարարել էր, որ Ուկրաինան չի վճարել օգոստոսին մատակարարած գազի դիմաց եւ ռուսական ընկերությանը պարտք է մնացել 882 մլն դոլար:

«Ամենամոտ ժամանակներս պետք է սպասել մեր ուկրաինացի գործընկերների արձագանքին եւ ըստ այդմ ընտրել համապատասխան վարքագիծ: Եթե արձագանք չլինի, նշանակում է հարկ կլինի անցնել կանխավճարային կարգի», ասել է ՌԴ վարչապետը:

Ալեքսեյ Միլլերը իր հերթին ասել է, որ Կիեւին տարկետում էր տրվել մինչեւ հոկտեմբերի 1-ը, բայց այդ ժամկետը եւս անցել է:

# Ինչպես է ԿՀՎ-ն զինում սիրիացի ապստամբներին

Ֆրանսիական «Ֆիգարո» թերթի տեղեկությունների համաձայն՝ ԿՀՎ-ն սիրիացի ապստամբներին զենք ու զինամթերք է մատակարարում Հորդանանի տարածքով: Հորդանանի, Սիրիայի եւ Իրաքի սահմանների մոտակայքում գոյություն ունի մի անապատային տարածք, որը ոչ պաշտոնապես կոչվում է «երեք սահմանների գոտի»: Այդ տարածքում սահմանագծերը պարզապես կորչում են ավազների մեջ: Այստեղ բոլոր ժամանակներում տերուտնօրինություն են արել մաքսանենգները: Գրեթե մեկ տարի է, ինչ ամերիկյան ԿՀՎ-ն եւ դրա հորդանանյան գործընկեր GID-ը ընդհատակյա կարգով հենց այդ տարածքով են սպառազինություն մատակարարում սիրիացի ապստամբներին, վերջիններիս օգնելով նախագահ Բաշար Ասադի վարչակարգի դեմ նրանց ծավալած պատերազմում:



Արեւմուտքի դաշնակից «Սիրիական ազատ բանակի» սպաներից մեկը՝ Անվարը, «Ֆիգարոյի» թղթակցին պատմել է զինամատակարարման որոշ մանրամասնություններ. «Մեր ութ ավտոմեքենաների շարասյունը մութն ընկնելու պես ճանապարհ է ընկնում սիրիա-հորդանանյան սահմանից հարավ ընկած Ռուեյշեդ բնակավայրից: Առաջին երկու Land Cruiser-ներում տեղեր են զբաղեցնում ԿՀՎ-ի գործակալները: Դրանց հետեւից շարժվում են ուրիշ հինգ ավտոմեքենաներ, որոնք լցված են լինում զենքերով: Շարասյունը եզրափակող ութերորդ մեքենայում նստում են թե՛ ԿՀՎ-ի եւ թե՛ GID-ի գործակալներ»:

# Մաճառի տոնն ու բերքի տոնը մշակութային միջոցառում...

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ազգային ժողովի հանձնաժողովներում շարունակվում է ներկայացվել բյուջեն, այս իմաստով, անկախ նախարարական նոր դեմքերից, ամեն ինչ հին է ու նույնությամբ կրկնվում է ամեն տարի՝ մինչեւ լիագումար նիստը գոլորշի բաց թողնելով, ու արդեն բուն նիստին բյուջեն քննադատելու արդեն հավես չթողնելով պատգամավորներին: Այնուամենայնիվ՝ երեւում է «Ժառանգության» նախկին պատգամավորական կազմի տեղը, երբ ժառանգականները, մեկը մեկին հերթ չտալով, հարցախեղդ էին անում նախարարներին ու մարզպետներին, օգնում բացել շատ անգամ ինտելեկտի խնդիր ունեցող մեր մարզպետների մի մասի մակարդակը եւ նրանց մարզերի բացերը: Երեկ էլ քննարկումներից առանձնացրեցինք մարզերի բյուջեների ներկայացման պահը՝ նկատի ունենալով, որ միգուցե մարզերի խնդիրների մի մասը կերեւակվի, սակայն հիասթափվեցինք, քանի որ ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանի եւ տարածքային կառավարման նախարար Վաչե Տերտերյանի կողմից ֆինանսական ընդհանուր հոսքերը եւ դրանց ուղղվածությունը ներկայացնելուց հետո մարզպետներին, Նիկոլ Փաշինյանից ու մասամբ Միքայել Մելքումյանից բացի, համարյա ոչ ոք հարց չէր ուղղում:

Տես էջ 3

# Հուշահամալիրի արտոնությունը Ժնեւի՞, թե՞ Անկարայի դաշտում

Ժնեւը ցանկություն ունի կանգնեցնել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված՝ վեճերի առիթ դարձած հուշահամալիրը ՄԱԿ-ին մերձակա Արիանա թանգարանին հարող այգում, ծանուցում է շվեյցարական «Բլիք» լրատուն: Հոկտեմբերի 28 թվագրված հաղորդագրությունից իրազեկ ենք դառնում, որ ի հեճուկս ցանկության, շինարարությունը դեռ չի սկսվել, քանի որ դրա համար արտոնություն դեռեւս չկա: Նախագիծը թուրքերի զայրույթն ու ընդվզումն էր գրգռել: 2005-ին Ժնեւի քաղխորհուրդը 1915-ի զանգվածային կոտորածները որպես ցեղասպանություն է ճանաչել եւ 2008-ին հավանության արժանացրել հուշահամալիրի ճարտարապետական նախագիծը՝1920-ականների ոճով 9 լապտերներ, որոնցից լամպերի փոխարեն պողպատե արցունքներ են կախված: «15 տարբեր վայրերից ընտրվել է Արիանա թանգարանին հարող զբոսայգին: Հիմա գնդակը Ժնեւի կանտոնի դաշտում է, շինարարության արտոնումը նրանք պիտի որոշեն», sda լրատվական գործակալությանը հաղորդել է Ժնեւ քաղաքի տեղեկատվության պատասխանատուն:

Հուշահամալիրի մասին «**Ազգը**» ժամանակին տեղեկացրել է: Միջազգային մրցույթում հաղթող էր ճանաչվել ֆրանսահայ արվեստագետ Մելիք Օհանյանի «Հիշողության լապտերներ» նախագիծը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

# Հայրենական արտադրող «Գրանդ Հոլդինգը»՝ 15 մլրդ դրամ հարկային մուծմամբ առաջին շարքերում

2013թ. առաջին ինը ամիսների 1000 խոշոր հարկատուների ցուցակում ամենախոշոր հայրենական արտադրող «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող ձեռնարկությունները, ինչպես միշտ, առաջատարների շարքում են: «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող խոշոր հարկ վճարող ինը ձեռնարկությունները միասին, 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում, ՀՀ պետական բյուջեին վճարել են 15 միլիարդ 56 միլիոն 928 հազար դրամ հարկ, ցուցակում զբաղեցնելով չորրորդ տեղը:

**«ԳՐԱՆԴ ՀՈԼԴԻՆԳ»-Ի ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013Թ. 9 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԸ**

| հ/հ | հերթակ. N-ը ցանկում 2013թ. 9 ամիս. | կազմ. անվանումը | գումարը /հազ.դրամ/ 2013թ. 9 ամիս. |
|---|---|---|---|
| 1 | 16 | «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ | 3.811.667.9 |
| 2 | 23 | «ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ» ՀՁ ՍՊԸ | 2.993.953.0 |
| 3 | 27 | «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ՀՁ ՍՊԸ | 2.777.947.3 |
| 4 | 24 | «ՄԱՍԻՍ ՏՈԲԱԿՈ» ՀՁ ՍՊԸ | 2.964.344.4 |
| 5 | 84 | «ՄԱՍԻՍ ԳՈՖՐՈՏԱՐԱ» ՍՊԸ /Գրանդ Մաստեր/ | 1.054.842.1 |
| 6 | 169 | «ԱՆՈՒՇ ԼԻՆԻ» ՍՊԸ | 493.499.4 |
| 7 | 279 | «ԳՐԱՆԴ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | 286.207.6 |
| 8 | 152 | «ԳՐԱՆԴ ՄՈԹՈՐՍ » | 577.378.2 |
| 9 | 757 | «ԳՐԱՆԴ ԿՈՍՄԵՐՑ» ՍՊԸ | 97.089.0 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 15.056.928.9 |

# Սաակաշվիլուն՝ ամերիկյան թե եվրոպական ապաստան... Ժվանիայի գործի բացահայտվելու դեպքում

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ



Վրաստանում իշխանափոխությունն ամբողջացված, լիարժեք փաստ է, որի դրսեւորումներն ու հետեւանքները դեռեւս սպասվում են: Մինչ այդ արդեն երկրում ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ իրադարձությունները յուրահատուկ մեկնաբանության են արժանանում: Մասնավորապես, խոսակցությունները, թե նախագահի ընտրություններից հետո հնարավոր է, որ Միխեիլ Սաակաշվիլուն ոչ միայն հարցաքննեն, այլեւ ձերբակալեն, կանգնեցնեն դատարանի առաջ, դարձել են հիմք պնդելու, թե որ քայլն ինչու է անում երկրի դեռեւս նախագահի լիազորություններն իրականացնող առաջնորդը:

Երեկ վրացական մամուլն էլ, հարեւան երկրների մամուլն էլ գերագույն հաճույքով ու պատրաստակամությամբ ծամծմում էին, թե Վրաստանի նախագահն իր հավատարիմ ընկերոջ՝ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավայի հետ «թռել» է երկրից:

Այդ մասին առաջիններից մեկը հայտնեց վրացական «Մաեստրո» հեռուստաընկերությունը, տեղեկացնելով, թե հոկտեմբերի 28-ի ուշ երեկոյան Սաակաշվիլին եւ Ուգուլավան հեռացել են Վրաստանից: Ընդ որում, որպես հավանական նպատակակետ էր նշվում Հոլանդիան՝ այն տրամաբանությամբ, թե այնտեղ քաղաքացիություն ստանալու հնարավորություն կա Սաակաշվիլու կնոջ հոլանդուհի լինելու հիմքով:

Տես էջ 2

# Ընթացիկ

## Հայաստանը 37-րդն է Doing Business-ի ցուցանիշով

*Առաջընթա՞ց է դա, թե՞ հետընթաց*

Համաշխարհային բանկի «Գործարարության զբաղվելը» (Doing Business 2014) զեկույցի համաձայն, Հայաստանն այս անգամ 189 երկրների մեջ հայտնվել է 37-րդ տեղում՝ Բելգիայի եւ Ֆրանսիայի միջեւ: Այս ցուցանիշը երեկ լրագրողներին ներկայացնելով, էկոնոմիկայի փոխնախարար **Կարինե Մինասյանը** նշեց, որ ՀԲ Doing Business-ի խումբը տարվա ընթացքում վերագնահատում է ցուցանիշները, հաշվի առնելով երկրների քանակը եւ բարեփոխումների արդյունքները: Ըստ այդմ, ինչպե՞ս է փոխվել Հայաստանի դիրքը:

Անցյալ տարվա համեմատ Doing Business-ում ավելացել են 4 երկրներ: Բացի դրանից, անցյալ տարվա ընթացքում մեր երկիրը հետընթաց է արձանագրել 2 ցուցանիշով՝ շինթույլտվությունների տրամադրման ժամկետները երկարացել են 7 օրով եւ էլեկտրաէներգիայի մատակարարմանը միանալունը՝ 3 օրով եւ ավելացել է նաեւ ծախսը: Կարինե Մինասյանի այս խնդիրները կապված են ոչ թե օրենսդրության, այլ վարչարարության հետ: Այսինքն, չեն կատարվում այն բարեփոխումները, որոնց վերաբերյալ օրենսդրական փոփոխություններ են կատարվել: Հայաստանի ցուցանիշները վատացել են նաեւ սնանկության ճանաչման եւ պայմանագրերի կիրառման մասով: Այս ամենը նկատի ունենալով, 2013-ին Համաշխարհային բանկի Doing Business-ի խումբը Հայաստանի համար հրապարակված 32-րդ տեղը փոխել էր եւ վերագնահատման արդյունքում 40-րդն էր դարձել:

Ինչ վերաբերում է արդեն Doing Business 2014-ում 3 տեղով առաջընթացին եւ 37-րդ տեղը զբաղեցնելուն, ապա դա պայմանավորված է եղել բիզնեսի գրանցման ոլորտում կատարված առաջընթացով, որտեղ 17 հազար դրամ վճարը վերացել է, գույքահարկի եւ հողի հարկի հարկային հաշվետվությունների քանակի կրճատմամբ եւ տրանսպորտային միջոցների համար գանձվող վճարի վերացմամբ: Կարինե Մինասյանն ընդգծեց, որ որքան առաջընթաց ենք արձանագրում, այնքան դժվարանում է առաջ շարժվելը, այդ պատճառով եկող տարվա համար «առաջարկելու ենք բարեփոխումների ավելի հավակնոտ ծրագիր»:




Հայաստանի Doing Business-ում 37-րդ տեղը ցուցանիշը լավագույնն է ԱՊՀ երկրների մեջ: Մեր երկրին հաջորդում են Ղազախստանը՝ 50-րդ տեղ, Բելառուսը՝ 63-րդ տեղ, Ղրղզստանը՝ 68-րդ տեղ, Ադրբեջանը՝ 70-րդ տեղ, Մոլդովան՝ 78-րդ տեղ, Ռուսաստանի Դաշնությունը՝ 92-րդ տեղ, Ուկրաինան՝ 112-րդ տեղ, Տաջիկստանը՝ 143-րդ տեղ, Ուզբեկստանը՝ 146-րդ տեղ: Այդուհանդերձ, մեր տարածաշրջանում Հայաստանը երկրորդն է Վրաստանից հետո, որն առաջադիմել է 1 տեղով եւ այժմ Doing Business-ի ցուցանիշով աշխարհում 8-րդն է: Թուրքիան 69-րդն է, Իրանը՝ 152-րդը: Էկոնոմիկայի փոխնախարարը փաստեց, որ Հայաստանն իր ցուցանիշով գտնվում է առաջին 20 տոկոս երկրների մեջ:

Մաքսային միությանը Հայաստանի միանալու վերաբերյալ հարցին պատասխանելով, Կարինե Մինասյանը դրական համարեց այն փաստը, որ Doing Business-ի ցուցանիշով, այդ երկրների անդամների մեջ, մեր երկիրն ունի լավագույն արդյունքը: «Դա լրացուցիչ փաստարկ է, որ դառնանք ՄՄ անդամ, դա մեր առավելությունն է», ասաց փոխնախարարը, ավելացնելով, որ միության անդամ այլ երկրները կարող են վերցնել մեր փորձը: Միաժամանակ, նա նշեց, որ կան առանձին ցուցանիշներ, որտեղ Հայաստանը ցածր դիրքեր ունի: Օրինակ՝ մաքսային առեւտրի կամ հարկային ստուգումների ցուցիչները, որի գծով Մաքսային միության անդամ երկրներ կան, որոնք ավելի լավ դիրքերում են:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*ԹԲԻԼԻՍԻ*

## Սաակաշվիլուն՝ ամերիկյան թե եվրոպական ապաստան... Ժվանիայի գործի բացահայտվելու դեպքում

*1-ին էջից*

**Որ Սաակաշվիլին կարող է փախչել երկրից, այնքան էլ հավանական ենթադրությունների շարքից չէր, սակայն այդպիսի դատողության համար հիմք է ծառայել կասկածելի հանգամանքներում մահացած Վրաստանի վարչապետ Զուրաբ Ժվանիայի գործով նոր հանգամանքների ի հայտ գալու մասին հայտարարությունը, որ արել է Ժվանիայի եղբայրը: Խոսակցություններ կան, թե անհայտ հանգամանքներում ենթադրաբար գազային թունավորումից մահացած Ժվանիայի գործում խառն է Սաակաշվիլու քեռին, որի խորհրդային «ԿԳԲ»-ական հարուստ անցյալը դավադրություններում մասնակցության հիմքերն ամրապնդող գործոն է:**

**Սաակաշվիլու «փախուստի» առնչությամբ մեկ այլ փաստարկ էլ նրա հրաժեշտի ուղերձն էր վրաց ժողովրդին հոկտեմբերի 28-ի ուշ երեկոյան, որում Վրաստանի նախագահը «բացեց սիրտն ու թույլ տվեց նայել իր հոգու մեջ», միեւնույն ժամանակ նշելով, թե իր գործունեությունը սկսել է այնպիսի Վրաստանում, որտեղ «ժողովուրդը պատրաստ էր սպանել հարեւանին միայն այն բանի համար, որ վերջինս էթնիկ այլ ծագում ուներ»... Սաակաշվիլին կոչ է արել հիշել իր նախագահության 10 տարիներն ու անցած ուղին եւ օբյեկտիվորեն գնահատել արվածը:**

**Ամեն դեպքում, դժվար թե Սաակաշվիլին ուղերձ ասեր ու ճամպրուկները հավաքած մեկներ Վրաստանից, հատկապես որ երեկ ավելի ուշ հայտնի դարձավ, որ Վրաստանի նախագահը Բրյուսել է մեկնել, իսկ Թբիլիսիի քաղաքապետը՝ Ստրասբուրգ: Ավելին, Վրաստանի արտաքին գործերի նախարարությունից, ի դեմս փոխարտգործնախարարի, տեղեկացրին, որ Բրյուսել այցի մասին ԱԳՆ-ն տեղեկացված է եղել, թեեւ այդ մասին արտաքին գործերի գերատեսչությունը տեղեկացել է Բելգիայում Վրաստանի դեսպանատնից:**

**Իհարկե, ԱԳՆ տեղեկացված լինելը դեռեւս չի նշանակում, թե Վրաստանի նախագահը չի հեռացել երկրից, բայց քանի որ այցը նախատեսված է եղել երկօրյա, սպասելու շատ քիչ ժամանակ է մնում՝ հասկանալու, թե որքան է Վրաստանը սիրում Նահանգներում իրավաբանի կարիերան կիսատ թողած Սաակաշվիլին:**

**Հետաքրքրական զուգադիպությամբ, սակայն, Սաակաշվիլու հնարավոր հեռացման մասին գրել է նաեւ միջազգային մամուլը: Մասնավորապես, Le Figaro պարբերականը հնարավոր է համարում, որ Սաակաշվիլին որպես միգրանտ կհայտնվի արտերկրում, բայց Հոլանդիայի փոխարեն նրան ֆրանսիական պարբերականն ուղարկում է Միացյալ Նահանգներ, որտեղ նրա կողմնակիցներն ու բարեկամները բավականին շատ են: Ըստ պարբերականի, հենց ամերիկյան դիվանագետներն ու չինովնիկներն են Սաակաշվիլուն խորհուրդ տալիս բնակություն հաստատել ԱՄՆ-ում՝ հեռու ներկայիս իշխանությունների հնարավոր հետապնդումներից:**

**Սաակաշվիլու հնարավոր ձերբակալությունն էլ արեւմտյան ու ամերիկյան որոշ լրատվամիջոցներ դիտարկում են ոչ թե որպես քաղաքական հետապնդում կամ արդարադատության իրականացում, այլ որպես Սաակաշվիլու հանդեպ Ռուսաստանից հնչող հայտարարությունների իրականացում՝ նկատի ունենալով հյուսիսային հարեւանի կողմից Սաակաշվիլու հետ որեւէ հարաբերություն չունենալու եւ նրան սպառնալու մոտեցումները:**

**Վրաստանի նոր նախագահի երդմնակալության արարողությունը տեղի կունենա նոյեմբերի 17-ին, որից հետո նորընտիր նախագահի եւ նորանշանակ վարչապետի փաստացի առաջին օտարերկրյա այցելությունը կարող է դառնալ հենց Արեւելյան գործընկերության գագաթաժողովին մասնակցությունը, որ տեղի կունենա նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում:**

## ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդների միջեւ հատուկ խաղարկության առաջին 20 հաղթողները ստացան իրենց սմարթֆոնները

Երեկ ՎիվաՍել-ՄՏՍ-ը հյուրընկալել էր «Անձնական» եւ «Խոսում է քաղաքը» սակագնային պլանների բաժանորդների միջեւ անցկացված առաջին խաղարկության հաղթողներին, որոնք հրավիրված էին ընկերության գլխամասային գրասենյակ՝ ստանալու իրենց նվերները: Նվերները հանձնեց ընկերության տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Խաղարկությունը կազմակերպվել էր «Անձնական» եւ «Խոսում է քաղաքը» սակագնային պլանների այն բաժանորդների համար, որոնք հոկտեմբերի 24-ի դրությամբ (խաղարկության անցկացման օրը) հանդիսացել են վերը նշված սակագնային պլանների շրջանակներում տրամադրվող «Հատուկ» փաթեթի ակտիվ բաժանորդ: Խաղարկությանը ներկա են եղել լրագրողներ: Օգտագործվել է հատուկ մշակված Microsoft.NET Random class selection on the system time համակարգչային ծրագիր:




Նախաձեռնության համաձայն, հոկտեմբերին անցկացված խաղարկությունից բացի, խաղարկություններ են կազմակերպվելու նաեւ նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին՝ յուրաքանչյուր ամսվա 20-ից ոչ շուտ: Ընդհանուր առմամբ՝ հոկտեմբեր, նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին կխաղարկվի 100 սմարթֆոն:

«Անձնական», «Խոսում է քաղաքը» եւ «Խոսում է քաղաքը 2» սակագնային պլանների ցանկացած բաժանորդ կարող է իր մտերիմներից մեկի համար բաժանորդագրվել «Հատուկ» փաթեթի, որն ընդամենը 2500 դրամ ամսավճարի դիմաց տրամադրում է 1500 րոպե ներառված ներցանցային խոսելաժամանակ եւ դեպի ՀՀ բջջային ցանցեր 150 SMS հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն: Իսկ ամսվա ընթացքում նշվածից ավելին օգտագործելու կամ այլ ծառայություններից օգտվելու դեպքում վճարը գանձվում է ըստ ընթացիկ սակագնային պլանի համար սահմանված սակագների: «Հատուկ» փաթեթն ակտիվացնելու համար անհրաժեշտ է ուղարկել *312# հրահանգը: «Անձնական» եւ «Խոսում է քաղաքը» սակագնային պլանների յուրաքանչյուր բաժանորդի տրամադրվում է միայն մեկ «Հատուկ» փաթեթ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

# Հաշմանդամները դժվարությամբ են աշխատանք գտնում




Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող 189 000 անձ, որոնց 92 տոկոսը չի աշխատում:

Ուսումնասիրված աշխատանքի հայտարարություններից պարզ է դարձել, որ գործատուները գերադասում են աշխատանքի ընդունել երիտասարդներին ու չեն ցանկանում իրենց կոլեկտիվում տեսնել հաշմանդամություն ունեցող անձանց:

ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն **Քարեն Հիլիարդի** խոսքերով՝ խնդիրը պետք է կարգավորվի օրենսդրական դաշտում, պետք է բացառվի հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ խտրականությունն ու հավասար հնարավորությունները աշխատանքի ընդունման վայրում պետք է լինեն ոչ թե բարի կամքի դրսեւորման արդյունք, այլ օրենքի մակարդակով:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար **Զեմմա Բաղդասարյանի** խոսքերով՝ հավասար հնարավորությունների դրսեւորման համար մշակվել է օրենսդրական նախագիծ եւ այժմ Ազգային ժողովում քննարկվում է «Զբաղվածության մասին» օրենքը:

«Պետական կազմակերպությունները այսօր պետք է օրինակ ծառայեն մասնավոր ընկերություններին՝ աշխատանքի ընդունելով հաշմանդամություն ունեցող անձանց», ասաց փոխնախարարը: Նման մի նախաձեռնությամբ արդեն հանդես է եկել արտակարգ իրավիճակների նախարարությունը, որի կազմում այսօր կա 30 հաշմանդամություն ունեցող անձ:

«Save the children» կազմակերպության տնօրեն **Իրինա Սաղոյանն** էլ տեղեկացրեց, որ այսօր 600 մարդ մասնագիտական վերապատրաստում է անցնում, որպեսզի հետագայում ձեռք բերի աշխատանք: 14 հասարակական կազմակերպություններ «Save the children»-ից ստացել են դրամաշնորհներ, որպեսզի վերապատրաստման ծրագրեր իրականացնեն հաշմանդամություն ունեցող անձանց համար նաեւ մարզերում:

Հ. Հ.

# ՀՅԴ-ն պահանջում է Հրաչ Մուրադյանի սպանության բացահայտումը

**ՀՅԴ-ն Պռոշյանի նախկին գյուղապետ Հրաչ Մուրադյանի սպանության բացահայտման պահանջով երեկ երթ էր կազմակերպել, որը սկիզբ առավ «Ազատության» հրապարակից, ապա հանգրվանեց նախագահի նստավայրի մոտ: Երթը գլխավորում էին մի շարք ղեկավար դաշնակցականներ, այդ թվում՝ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը: Երթի մասնակիցները նախագահական նստավայրում նամակ փոխանցեցին՝ երկրի նախագահ Սերժ Սարգսյանին հանձնելու համար: Նամակում ասվում է, որ Պռոշյանի գյուղապետի սպանությունից հետո անցել է 7 ամիս, սակայն ոճիրը դեռ չի բացահայտվել, ու հայտնվում է մտահոգության այն մասին, որ այդքան երկար ժամանակում ամբողջական եւ բազմակողմանի քննություն չի իրականացվել: Ներկայացվում է նախկինում եւս Պռոշյանում ընտրությունների հետ պատճառահետեւանքային կապով կապված այլ հանցագործությունների չբացահայտումը, որոնք կատարող ուժեր, ըստ նամակի, այսօր խոչընդոտում են սպանության բացահայտումը. «Պարոն նախագահ, պահանջում ենք սպանության բացահայտման գործը վերցնել Ձեր անմիջական**



**հսկողության տակ, ապահովել ամբողջական եւ բազմակողմանի քննություն: Վստահ ենք՝ նախորդ հանցագործությունների, հատկապես՝ 2010թ. մահափորձի բացահայտումը կհանգեցնի նաեւ «Մարտական խաչի» շքանշանակիր Հրաչ Մուրադյանի սպանության բացահայտմանը: Մեկ անգամ եւս շեշտում ենք, որ սա մեր պետության պատվի խնդիրն է», ասված է նամակում:**

Մ. Խ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Դեսպան Ռենո. Հայոց ցեղասպանության մերժումը քրեականացնող օրինագիծը աշխատանքային փուլում է

**Թե Ֆրանսիայում երբ կընդունվի Հայոց ցեղասպանության մերժումը քրեականացնող օրինագիծը, Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն դժվարանում է պատասխանել, սակայն նշում է, որ հարցն աշխատանքային փուլում է: Նրա խոսքերով՝ այսօր մասնագետներն աշխատում են, որ օրինագիծը համաձայնեցվի երկրի սահմանադրությանն ու վիճահարույց կետեր չլինեն:**

**Նա հիշեցրեց, որ 2012-ի հունվարին Ֆրանսիայի Ազգային ժողովը շրջանառության դրեց Հայոց ցեղասպանության մերժումը քրեականացնող օրինագիծը: «Հետագայում օրենքը հայտնվեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի օրակարգում: Խորհուրդն անվավեր ճանաչեց օրինագիծը՝ սահմանադրությանը չհամապատասխանելու պատճառաբանությամբ: Ֆրանսիայի այն ժամանակվա նախագահ Սարկոզին էլ հանձնարարեց մշակել նոր օրինագիծ, որտեղ ներկայացված կլինի մերժումը քրեականացնող կետը՝ հաշվի առնելով սահմանադրության պարտադիր պահանջները», ասաց Ռենոն՝ հավելելով, որ այսօր աշխատանքային խումբը համապատասխան ուսումնասիրություններ է կատարում:**

**Անդրադառնալով Հայաստանի որոշմանը՝ անդամակցել Մաքսային միությանը, դեսպանն ասաց, որ Հայաստանն ինքնիշխան պետություն է եւ հաշվի է առնում իր շահերը: «Տեղյակ եմ, որ Հայաստանի իշխանություններին ասվել է, որ կա ցանկություն շարունակելու հարաբերությունները Եվրոմիության ամենատարբեր ատյանների հետ՝ այնքանով, որքանով դա համապատասխանում է կայացրած որոշմանը»:**



**Դեսպանի խոսքերով՝ ԵՄ-ն կշարունակի զարգացնել եւ խորացնել Հայաստանի հետ հարաբերությունները: «Իշխանությունները ցանկություն են հայտնում բոլոր ոլորտներում եւ բոլոր ձեւաչափերում շարունակել իրենց գործակցությունը ԵՄ-ի հետ: Եվրոմիությունը չի փակել իր դռները, այն բաց է Հայաստանի առաջ»:**

Հ. Հ.

# Գրիգոր Լուսավորիչ բուժկենտրոնը համալրվել է նորագույն սարքավորումով

**Երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը այցելել են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն: Կառավարության ղեկավարը ծանոթացել է ժամանակակից թվային ստացիոնար ռենտգեն սարքավորման հնարավորություններին: Կենտրոնը վերջերս է համալրվել այս սարքավորումով: Կառավարության տեղեկատվության ու հասարակայնության հետ կապերի վարչությունից տեղեկացանք, որ սարքավորումը, որը կենտրոնին նվիրաբերել է «Սամսունգ» ընկերությունը, միակն է Հայաստանում ու երկրորդն է ԱՊՀ տարածքում: Սարքավորումը թույլ կտա մեկ ժամում հետազոտել շուրջ 200 հիվանդի:**

**Բժշկական կենտրոնը նաեւ հնարավորություն է ընձեռելու Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողներին գործնական դասընթացներ անցկացնել նշված սարքավորումով:**

Ի. Պ.

# Մաճառի տոնն ու բերքի տոնը մշակութային միջոցառում են

*1-ին էջից*

**Եվ ընդհանուր առմամբ մարզպետները ջան ասելուց եւ ջան լսելուց հետո՝ գոհ ու երջանիկ հեռացան: Հատկապես Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանին եւ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանին պատգամավորները, նախկին գործընկերների հանդեպ համերաշխության զգացումից ելնելով միգուցե, ոչ մի հարց չուղղեցին, մյուսներն էլ թեթեւ պրծան: Իսկ քանի որ մարզերի խնդիրներն այնքան էլ հաճախ չեն բարձրանում Ազգային ժողովում, հույս ունեինք այս առիթն օգտագործված տեսնել եւ մարզային խնդիրների համայնապատկերին ծանոթանալ: Մի քանի ուշագրավ պահ, այնուամենայնիվ:**

**Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը հասցրեց «շփվել» Ն. Փաշինյանի հետ եւ նրանից ավանդական հարցեր ստանալ՝ նախ՝ թե ինչու Տարոն Մարգարյանը երբեւէ չի գալիս բյուջե ներկայացնելու (մի մարզպետ էլ չէր գալիս՝ հանեցին, նկատի ուներ Սուրիկ Խաչատրյանին), հետո արդեն խցանումների պատճառ ասֆալտապատումների, Կարեն Դեմիրճյանի արձանի տեղադրման ուշացման վերաբերյալ: Բնականաբար՝ ասֆալտապատումը ժամանակին եւ ճիշտ աշխատակարգով կատարելու պատասխանը պետք է հնչեր եւ հնչեց, իսկ այ Դեմիրճյանի արձանը երբ քանդակագործն ավարտի՝ անմիջապես կտեղադրեն: Ի դեպ՝ Կ. Արեյանին լրագրողները հասցրին բռնել ԱԺ միջանցքում եւ իմանալ, որ տրանսպորտի թանկացումը Երեւանում անխուսափելի է եւ որ՝ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը շարունակում է աշխատել այդ ուղղությամբ եւ մեկ ամսից գուցե եզրակացություն լինի: Իսկ, այ, տրանսպորտի թանկացումից հետո սպասարկման որակը արմատապես կբարելավվի:**

**Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, երբ ուրախ-զվարթ զեկուցեց, թե ոչ մի ծրագրով բյուջետային հատկացման նվազեցում չի եղել, անմիջապես երկրորդվեց հարցով, թե 770 աշակերտի նվազում է եղել մարզում (ֆինանսավորումն աշակերտների թվով է), աշխատողներն էլ 68 հազարից նվազել են 51 հազարի, այս դեպքում ո՞նց չեն նվազել հատկացումները: Սահակյանը ստիպված էր ճշգրտում անել՝ ընդամենը 420 աշակերտի նվազում է եղել (եթե նույնիսկ այդ թիվն է՝ մեկ մարզի կտրվածքով սա անհանգստացնող թիվ է), մարդիկ էլ սեզոնային աշխատանքի են մեկնում՝ այս դեպքում գործազրկության թիվն էլ է նվազում: Բա իհարկե, որ երկրից գործազուրկները գնան՝ գործազրկությունը կնվազի, էլի: Ու մինչ Արագածոտնի մարզպետն ասում էր, թե աշակերտների թիվը ոչ թե նվազել է, այլ նրանք տեղափոխվել են այլ մարզեր, կամ ավագ դպրոցներ, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը նկատեց, թե Սյունիքում աշակերտների թիվն ավելանում է: Այս բոլորից միակ հարցասու Փաշինյանն իր համար եզրակացրեց, թե ուրեմն Արագածոտնի աշակերտները գնացել են Սյունիք: Ահա այսպիսի քննարկում:**

**Հետո արդեն Արարատի նոր մարզպետ Արամայիս Գրիգորյանին էին որպես նորանշանակի շնորհավորում՝ հարց տալու փոխարեն, բայց վերջինս, այնուամենայնիվ, ստիպված եղավ պատասխանել մարզի՝ 39 տոկոս աղքատության բարձր թվի մասին հարցին: Իսկապես, ինչու Արարատյան դաշտում ունեցած հողատարածքներից 1 մլն դոլար շահույթ ստացող պաշտոնյաներ կան, իսկ ահա գյուղացին չի կարողանում իր հողակտորն այնպես մշակել, որ գոնե 10-20 հազար դոլար շահույթ ստանա եւ աղքատ չլինի: Ա. Գրիգորյանն էլ պատասխանեց, թե հողաբաժանման ժամանակ մեծ հողատարածքներ ձեռքբերածները, բնականաբար, մեծ շահույթներ են ստանում, այդ պատճառով էլ հիմա պետությունը քաղաքականություն է փոխում: Պետությունը, այսինքն նույն ինքը՝ Վաչե Տերտերյանը քննարկման ավարտին, այո, խոսեց, հողերի խոշորացման ծրագրի գոյության մասին: Գործընթացը թեեւ զգույշ քայլերով է առաջ գնում, բայց ոլորտում առաջընթաց կա, եւ առաջարկությունների փաթեթն արդեն քննարկելու առիթներ եղել են եւ Ազգային ժողովում, եւ Հանրային խորհրդում եւ Ազգային անվտանգության խորհրդում: Գաղափարն ընդունելի լինելով, այնուամենայնիվ, զգացմունքային պլաս ունի իր մեջ, այնպես որ՝ գործընթացն առավել մտածված են առաջ տանում:**

**Իսկ ահա երբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանից հետաքրքրվում էին, թե այդ ի՞նչ մշակութային ծրագրեր են իրականացվում համայնքային բյուջեներով (քանի որ պետության հատկացված միջոցները միայն երկու մշակութային միջոցռման համար էին), վերջինս թվելուց նեղն ընկավ, թե՝ գիրք ենք տպում, ցուցահանդես կազմակերպում, ու մինչ ուզում էր հիշել էլ ինչ ասի, տեղերից հուշեցին՝ բերքի տոն, մաճառի տոն, տոլմայի տոն... Բա:**

## Համայնքներ

# «Որ մեծանամ՝ ավելի մեծ եկեղեցի եմ կառուցելու»

### *Ասում է Նիժնի Նովգորոդի հայ համայնքի նախագահ Աղասի Ալեքյանի 8-ամյա որդին*

Հոկտեմբերի 26-ին Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդի մարզի Նիժնի Նովգորոդ մարզկենտրոնի Երեւանյան փողոցում անսովոր աշխուժություն էր:

Վերջերս այստեղ, այս փողոցում իր ավարտուն տեսքով վեր խոյացած Սուրբ Ամենափրկիչ հայկական տուֆակերտ եկեղեցու առջեւ էին հավաքվել հայ համայնքի հարյուրավոր ներկայացուցիչներ, հյուրեր՝ մայրաքաղաք Մոսկվայից եւ հայկական մյուս համայնքներից, լրագրողներ՝ ամենատարբեր ԶԼՄ-ներից: Առիթը Աստվածահաճո էր՝ եկեղեցու երկու խաչերի օծման արարողությունը:

Ժամը 12-ին սկսվում է հանդիսությունը: Մոսկվայից ժամանած հայոց թեմի եւ Սուրբ Ամենափրկիչի հոգեւոր սպասավորները, ըստ Հայ առաքելական եկեղեցում ընդունված կարգի, կատարում են քանդակագործ Արա Մարտիրոսյանի պատրաստած երկու խաչերի օծման արարողությունը: Ըստ օծման կարգը կատարող հոգեւոր հայրերի՝ քրիստոնեության մեջ խաչը Քրիստոսի չարչարանքների գործիքն էր, որ մեզ համար դարձավ նշան Տիրոջ խաչելության եւ մեր փրկության: Խաչի քարոզությունն Աստծո զորությունն է: Խաչը մենք կրում ենք իբրեւ հիշատակ Տիրոջ չարչարանքների, ինչպես նաեւ հավատքով այն ընդունում ենք իբրեւ ամուր վահան՝ սատանայի զորությունների դեմ: Խաչը քրիստոնեության հաղթանակի նշանն է եւ այն օգտագործում են եկեղեցիների կառուցման ժամանակ, որպեսզի սուրբ բարեխոսությունը տվյալ համայնքի վրա լինի:

Խաչերի օծման կարգին հետեւում է հանդիսության երկրորդ մասը, կենդանի հնչողությամբ եկեղեցու շուրջբոլորը թեւածում է հայկական երաժշտությունը, երգն ու պարը, ասմունքը:

Հենց այստեղ էլ, տոնական օրվա խորհրդով խանդավառված մարդկանց կողքին հանդիպում եմ իմ վաղեմի ծանոթին՝ Նիժնի Նովգորոդի հայ համայնքի նախագահ, Նիժեգորոդի մարզում եւ Ռուսաստանում հայտնի գործարար, Նիժնի Նովգորոդի դումայի նախագահի օգնական Աղասի Ալեքյանին, ով նաեւ 2008 թվականից Նիժնի Նովգորոդում կառուցվող Սուրբ Ամենափրկիչ հայկական եկեղեցու գլխավոր հովանավորն ու եկեղեցու խորհրդի անդամ է:

- Այսօր հիշարժան օր է բոլորիս համար, Հայրենիքից հեռու գտնվող մեր հայրենակիցները լավ են հասկանում, թե ինչ նշանակություն ունեն հայկական եկեղեցին եւ օծված խաչը օտար ափերում,- ասում է Աղասի Ալեքյանը:- Հինգ տարի առաջ՝ 2008 թվականի դեկտեմբերին, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ կատարվեց Սուրբ Ամենափրկչի հիմնարկեքը: Արարողության ընթացքում, ըստ Հայ եկեղեցու ավանդության, 16 հիմնաքարերը լվացվեցին ջրով, գինով եւ սրբագործվեցին մյուռոնով: Հիմնարկեքի արարողությունից հետո մեծ ոգեւորությամբ եւ լայն թափով սկսվել է շինարարությունը: Եկեղեցին օծվել է 2011 թվականին: Կառուցվել է բացառապես մեր միջոցներով, կազմակերպվել են բարեգործական համերգներ: Եկեղեցին ունի վարչական եւ կրթական կենտրոն, որին մաս է կազմում նաեւ կիրակնօրյա հայկական դպրոցը, որը մատաղ սերնդին իր արմատներին կապելու կարեւորագույն եւ հուսալի երաշխիք է: Եկեղեցու բարձրությունը 19 մետր է, մակերեսը կազմում է 259 քմ, աղոթասրահի մակերեսը՝ 100 քմ: Եկեղեցում տեղավորում է միանգամից 200 մարդ: 2012-ի մայիսին ավարտվել են շինարարական բոլոր աշխատանքները, եկեղեցին պատրաստ է, հայ համայնքը անհամբերությամբ սպասում է Սուրբ Ամենափրկչի պաշտոնական բացմանը...

Աղասի Ալեքյանի կողքին են նաեւ երկու որդիները՝ 3-ամյա Ալենը եւ 8 տարեկան Ալեքը: Զրուցում ենք, երեխաները






խոսում են հայերեն, պատմում իրենց առօրյայից, իսկ ավագ որդու՝ Ալեքի ուրախությանը չափ ու սահման չկար: Խելացի աչքերը հառելով ինձ՝ խոսում է իր ապագայի ծրագրերից.

- Որ մեծանամ՝ հայրիկիս գերազանցելու եմ, ավելի մեծ եկեղեցի եմ կառուցելու, հայկական դպրոցներ եմ կառուցելու, որ երեխաները հայոց լեզուն, հայերեն խոսելը չմոռանան...

Զրույցի եմ բռնվում նաեւ Նիժնի Նովգորոդում բնակվող հայերի հետ: Նրանցից շատերը այստեղ են եկել ընտանիքներով: Ուրախություն եւ բերկրանք կա բոլորի հայացքներում: Գոհ են հայ համայնքի իրենց ղեկավարի ուշադրությունից եւ հայապահպան ձեռնարկումներից:

- Բոլորին օգնում եւ ձեռք է մեկնում մեր Աղասին, մտիր մոտը՝ ուշադիր լսում եւ ուժերի ներածին չափով լուծում է տալիս խնդրին, մենք հիացած ենք մեծ սրտի տեր այս մարդու ներկայությունից...

Նիժեգորոդի մարզի եկեղեցիների վերականգնողական աշխատանքների համար արժանացել է Ռուս ուղղափառ եկեղեցու «Սուրբ Սերաֆիմի» առաջին աստիճանի մեդալի, արդեն տեւական ժամանակ աջակցում է մարզի հաշմանդամներին եւ վերանորոգում նրանց բնակարանները:

Ուրախությամբ տեղեկանում եմ նաեւ, որ Աղասի Ալեքյանի ղեկավարած հայ համայնքի երկար տարիների համառ ջանքերի շնորհիվ Նիժնի Նովգորոդի համալսարանն արդեն երկու տարի դարձել է հայագիտության առաջատար կենտրոններից մեկը, կազմակերպվում են միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցում են գիտնականներ, դիվանագետներ, ուսանողներ, ասպիրանտներ եւ բազմաթիվ այլ հյուրեր ՌԴ-ից, Հայաստանից եւ այլ երկրներից:

Հայ համայնքի ղեկավարն իր բարեգործական ձեռնարկումներում աչքաթող չի արել նաեւ մարզական բնագավառը. 2008-ին Ալեքյանը դարձավ Նիժնի Նովգորոդում անցկացված մանկապատանեկան համառուսական ազատ ոճի ըմբշամարտի առաջնության գլխավոր հովանավորը, իսկ 2007 թվականից մինչ օրս Մոսկվայում անցկացվող եւ տարեցտարի մեծ համբավ ու ճանաչում վայելող «Արմենիա Դիասպորա» խորագիրը կրող թենիսի ամենամյա բաց առաջնության գլխավոր հովանավորներից մեկն է:

Աղասի Ալեքյանը ծնունդով ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղից է, 1982-ին ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայությունն անց է կացրել Մոսկվայում: Զորացրվելուց հետո ընդունվել եւ 1990-ին ավարտել է Գորկու պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 2007-2009 թթ. ստացել է երկրորդ բարձրագույն կրթությունը՝ գերազանցությամբ ավարտելով Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո ստեղծել է մի շարք ընկերություններ, տարեցտարի ընդլայնել գործունեությունն ու մեծ հաջողությունների հասել՝ արժանանալով տեղաբնակների համակրանքին ու ջերմ վերաբերմունքին: Մասնավորապես, 1997-ին Ալեքյանի կողմից հիմնադրված «Ավտոբան» ընկերությունը կարճ ժամանակում դարձավ Գորկու ավտոգործարանի 12 խոշոր դիլերներից մեկը: Ավտոմեքենաների վաճառք իրականացնող «Ավտոբանը» միաժամանակ սկսեց զբաղվել նաեւ ճանապարհաշինությամբ եւ ճանապարհների նորոգումով: Ընկերությունը գնեց հզոր տեխնիկա, ձեռք բերեց ասֆալտբետոնի սեփական գործարան եւ ճանապարհների որակի վերահսկման մասնագիտացված լաբորատորիա: 2005-ին «Ավտոբանը» դարձավ ճանապարհաշինությամբ զբաղվող տասը խոշորագույն ընկերություններից մեկը: Այդ ընթացքում կյանքի կոչվեցին բազմաթիվ մեծ ծրագրեր. ճանապարհների շինարարություն, նորոգում եւ բարեկարգում Նիժեգորոդի մարզում, Նիժնի Նովգորոդ քաղաքում, Գորկի քաղաքի երկաթուղու եւ մի շարք զորամասերի տարածքներում ու բազմաթիվ այլ վայրերում: Ընկերությունը դարձավ ճյուղի խոշոր առաջատարը ամբողջ Նիժեգորոդի մարզում: Այդ ամենին զուգահեռ, 2004 թվականից «Ավտոբանը» ընդլայնեց իր գործունեությունն ու սկսեց զբաղվել նաեւ բնակարանաշինությամբ:

Աղասի Ալեքյանին խնդրում եմ պատմել համայնքի գործերից եւ հոգսերից:

- Նիժեգորոդի մարզում այսօր ապրում է շուրջ 13 հազար հայ, ոչ պաշտոնական տվյալներով՝ 30 հազար,- ասում է զրուցակիցս: Նիժնի Նովգորոդում վաղուց ձեւավորված ավանդույթներ կան ազգությունների միջեւ, եւ ես ուրախ եմ, որ դրանք շարունակվում են: Ինչ վերաբերում է հայերին, նրանք բնականոն ձեւով ինտեգրվել են մեր իրականությանը, դարձել նրա մի մասնիկը, իսկ մեր հայ համայնքն էլ ակտիվ ներգրավված է քաղաքի տնտեսական եւ մշակութային կյանքում:

- Մեր հայ համայնքը հպարտանում է իր ձեռքբերումներով,-շարունակում է Աղասի Ալեքյանը,- ռուսական այս անկյունում հավաքված մեր հայրենակիցները, որոնց մեջ կան մեծ թվով շնորհալի, տաղանդավոր եւ արժանապատիվ մարդիկ, մխիթարվում են նրանով, որ այս խառը ժամանակներում կարողանում են պահպանել հայ մարդու իրենց դիմագիծը...

Ժամեր անց ես հրաժեշտ եմ տալիս ռուսական այս խաղաղ անկյունում ճակատագրի կամոք հավաքված մարդկանց եւ գնացքով վերադառնում Մոսկվա: Ես հիացած եմ իմ հայրենակիցների հայապահպան եւ հայանպաստ գործունեությամբ: Հավատացնում եմ՝ այն, ինչը որ անում են նրանք հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու՝ Աստվածահաճ առաքելություն է:

Իսկ ականջներումս դեռ հնչում են 8-ամյա Ալեքի խոսքերը. «Որ մեծանամ՝ ավելի մեծ եկեղեցի եմ կառուցելու, հայկական դպրոցներ՝ որ երեխաները հայոց լեզուն, հայերեն խոսելը չմոռանան»...

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
**«Ազգի» հատուկ թղթակից,**
**Նիժնի Նովգորոդ-Մոսկվա**

# Իսկ ո՞ւր է «գերագույն գլխավոր հրամանատար» Իլհամ Ալիեւը

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունում շարունակում են մաքրել «սաֆարաբիեւյան ախոռները». virtualaz.org-ը, հղում անելով ռազմական փորձագետ Ուզեիր Ջաֆարովին, տեղեկացրել է, որ պաշտոնից ազատվել է ՊՆ թիկունքի պետ գեներալ-մայոր Փիրի Իսրաֆիլովը: «Իսրաֆիլովը գեներալի կոչում է ստացել այս տարվա հունիսին, եւ այն ժամանակ շատերը դրանից զարմացած էին»,- ասել է Ջաֆարովը: Ըստ տեղեկությունների, Իսրաֆիլովը պաշտոնազրկվել է բանակի վառելիքի եւ քսայուղերի մատակարարման գործում «թույլ տված յուրացումների համար»:

Պաշտոնազրկվել է նաեւ Հեյդար Ալիեւի անվան բարձրագույն ռազմական ուսումնարանի պետ գնդապետ Միրզալի Յուսիֆովը: Նախօրեին զբաղեցրած պաշտոնից ազատվել էր զինված ուժերի ակադեմիայի պետ գեներալ Նաջաֆ Գամբարովը, նրա փոխարեն նշանակվել է Ադրբեջանի ռազմաօդային ուժերի եւ ՀՕՊ-ի հրամանատար Ալթայ Մեհթիեւը:

Ռազմական փորձագետ Ջաֆարովի խոսքերով՝ Միրզալի Յուսուֆովի «անցյալը չափազանց մութ է»: Փորձագետի ասելով՝ «ղարաբաղյան պատերազմի ամենաեռուն շրջանում Յուսուֆովը գործուղվել է Մռավի լեռնանցքում գործող զորամաս, բայց փոխարենը մեկնել է Ռուսաստան, հետո վերադարձել եւ ՊՆ-ում պաշտոն ստացել, իսկ թե ինչո՞ւ զինվորական դատախազությունը չի հետաքրքրվել, մնում է գաղտնիք»:

Միաժամանակ, Ջաֆարովը պաշտպանության նախարարությունում կատարվող փոփոխությունները համարել է «լրիվ անհասկանալի», թեեւ ակնարկել է, որ պաշտոնազրկվող սպաները «Սաֆար Աբիեւի մարդիկ են, իսկ գլխավոր շտաբի պետ Նաջմեդդին Սադիխովը 1995թ.-ից Աբիեւի դեմ պայքարի մեջ է»: Իր հերթին virtualaz.org-ն ավելացրել է, որ պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը «նոր մարդ է եւ տեղյակ չէ կառույցի աշխատանքի առանձնահատկություններին, նա կադրային բոլոր փոփոխությունները համաձայնեցնում է գլխավոր շտաբի պետի հետ»:

Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամլո ծառայության պետի տեղակալը չի հերքել, որ կադրային փոփոխություններ են կատարվում: Նա ասել է, որ «թոշակի են անցնում որոշակի տարիքային սահմանի հասած բարձրաստիճան սպաներ, որոնց դեպքերում էլ կատարվում է ռոտացիա, ինչը բնական է»:

Թե իրականում ի՞նչ է տեղի ունենում հարեւան երկրի պաշտպանական գերատեսչությունում, թողնենք մի կողմ: Բայց չենք կարող շրջանցել մի կարեւորագույն հանգամանք. սահմանադրությամբ Ադրբեջանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը նախագահն է, իսկ այդ պաշտոնն զբաղեցնում է Իլհամ Ալիեւը:

Բնական է, որ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների փոփոխությունները կամ պահեստազոր արձակումը չեն կարող կատարվել առանց Իլհամ Ալիեւի իմացության: Թերեւս ճիշտ կլինի ասել, որ դրանք պետք է կատարվեն նրա հրամանագրերով: Մինչդեռ լրատվամիջոցները համառորեն տպավորություն են ձեւավորում, որ ամեն ինչ անում է պաշտպանության նորանշանակ նախարարը:

Եթե իրոք այդպես է, նշանակում է, որ ադրբեջանական զինված ուժերը ենթարկվում են ոչ թե նախագահին, այլ՝ պաշտպանության նախարարին, քանի որ կարեւորագույն պաշտոններում նշանակումներ կատարում է վերջինս: Իսկ եթե փոփոխությունները կատարում է Իլհամ Ալիեւը, բայց քողարկվում պաշտպանության նախարարի թիկունքում, ուրեմն անցած բոլոր տարիներին նա փաջաստեղյակ է եղել բանակում տիրող խայտառակ իրավիճակին, սակայն քաղաքական նպատակահարմարությունից ելնելով չի համարձակվել հակադրվել Սաֆար Աբիեւին:

Երկու դեպքում էլ ստացվում է, որ Իլհամ Ալիեւը միայն անվանապես է կոչվում զինված ուժերի «գերագույն գլխավոր հրամանատար», իսկ բանակը փաստացի գտնվել եւ գտնվում է պաշտպանության նախարարի կամ գլխավոր շտաբի պետի ենթակայության տակ:

19 տարի գլխավորելով Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, Սաֆար Աբիեւը վերջապես պաշտոնազրկվել է: Սակայն Իլհամ Ալիեւը համարձակություն չի ունեցել նորանշանակ նախարարին անձամբ ներկայացնելու եւ իր փոխարեն ուղարկել է աշխատակազմի ղեկավարի տեղակալ, նախագահի ռազմական խորհրդական Վահիդ Ալիեւին:

Չափազանց խորհրդանշական է ստացվել. «գերագույն գլխավոր հրամանատարը» բարձրագույն սպայակազմի աչքերին նայելու եւ նախընտրած թեկնածուին ներկայացնելու քաջություն չունի, սակայն առիթ-անառիթ չի զլանում ճամարտակել, որ «զինված ուժերը պատրաստ են կատարելու իրենց առջեւ դրված ցանկացած խնդիր»:

Եթե «գերագույն գլխավոր հրամանատարը» բառիս բուն իմաստով թաքնվում եւ ոչինչ չի ասում պաշտպանության նախարարությունում կատարվող սկզբունքային նշանակության փոփոխությունների, փոխատեղումների եւ պաշտոնանկությունների մասին, ապա բանակն ինչո՞ւ պիտի նրան լուրջ ընդունի: Ավելին, միջազգային ասպարեզում ի՞նչ «հեղինակություն» կարող է ունենալ մի «գերագույն գլխավոր հրամանատար», որի փոխարեն պաշտպանության նախարարը եւ գլխավոր շտաբի պետն են լուծում բարձրագույն սպայակազմում նշանակումներ կատարելու հարցը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԳԱՂՏՆԱԼՍՈՒՄ

# ԱՄՆ-ը խոստանում է սահմանափակել Եվրոպայի լրտեսումը

**Ամերիկյան ԱԱԳ-ի կողմից դաշնակից երկրների լրտեսման վերաբերյալ հաղորդումների հրապարակումից հետո Սպիտակ տունը հայտարարել է, որ անհրաժեշտ է համարում մտցնել հետախուզական տվյալների հավաքման լրացուցիչ սահմանափակումներ:**

**Նախագահ Օբամայի մամլո քարտուղար Ջեյ Քարնիի խոսքերով, հետախուզման քաղաքականության վերանայման ընթացքում Սպիտակ տունը հաշվի կառնի հասարակայնության տագնապները մասնավոր կյանքի անձեռնմխելիության պահպանման հարցում:**



**Քարնիի հայտարարությունն արվեց միջազգային լրատվամիջոցների այն բացահայտումներից հետո, որոնց համաձայն ամերիկյան հատուկ ծառայությունները գաղտնալսել են աշխարհի 35 ղեկավարների հեռախոսազրույցները եւ հեռախոսազանգերի մասին տվյալներ են հավաքվել մասնավորապես Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում եւ Բրազիլիայում:**

**Գաղտնալսումների առաջացրած «վստահության ճգնաժամը» հարթելու նպատակով Վաշինգտոնն է մեկնել ԵՄ պատվիրակություն, հաղորդում է «Եվրոնյուզ» հեռուստաալիքը:**

**Պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ Ջեյ Քարնին հավաստիացրել է, որ ԱՄՆ-ը հետախուզական տվյալները չի օգտագործել հանուն սեփական տնտեսական շահերի, եւ որ Նախագահ Օբաման առաջվա պես հավատարիմ է հետախուզական տեղեկություններն անվտանգության ապահովմանը ծառայեցնելու սկզբունքին:**

**Քարնին ավելացրել է, որ ներկայումս վերանայվում է հետախուզական ծառայությունների աշխատանքը, որպեսզի ապահովվի ինչպես ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցներին անվտանգությունը, այնպես էլ քաղաքացիների մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:**

**Նախագահ Օբաման եւ իր մամլո քարտուղարը, սակայն, չեն մեկնաբանել դաշնակից երկրների ղեկավարների հեռախոսների գաղտնալսման հետ կապված կոնկրետ մեղադրանքները:**

**Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատությունների հանձնախմբի ներկայացուցիչները եվրոպացիների լրտեսման հետ կապված մեղադրանքները քննարկել էին Կոնգրեսի անդամների հետ: ԵՄ պատվիրակության անդամ, բրիտանացի լեյբորիստ եվրոպատգամավոր Կլոդ Մորաեսը հանդիպումից հետո BBC-ի թղթակցին ասել էր, որ մեղադրանքներին ի պատասխան՝ իրենք լսել են միայն «շաբլոն արտահայտություններ»:**

**Մասնավորապես Իսպանիան ԱՄՆ-ից պարզաբանումներ է պահանջում ԱԱԳ-ի իրականացրած գաղտնալսումների կապակցությամբ: Էդվարդ Սնոուդենից ստացված գաղտնի փաստաթղթերի հիման վրա El Mundo թերթը գրել էր, որ միայն մեկ ամսում ԱԱԳ-ն գաղտնալսել է Իսպանիայի քաղաքացիների եւ կառավարության անդամների 60 մլն հեռախոսազրույց:**

